ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի, Բյուրեղավան համայնք
Վազգեն Ա. Վեհափառի փողոց, հեռ. (222)65203 , էլ .փոստ byureghavan @mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 20 » փետրվարի 2012 թվականի № 40 – Ա

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՋՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 38/53 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐԴԱՆ ԵՆՈՔՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թվականի ապրիլի 12-ի № 286-Ն որոշմամբ հաստատված կարգի 22 - 28-րդ կետերով, հիմք ընդունելով Բյուրեղավանի քաղաքային համայնքի ավագանու 2011թվականի հուլիսի 13-ի № 26-Ն որոշումը և Բյուրեղավանի քաղաքային համայնքի աճուրդային հանձնաժողովի 2012թվականի փետրվարի 15-ի №04 արձանագրությունը՝ **որոշում եմ.**

1. Բյուրեղավանի քաղաքային համայնքի սեփականություն համարվող(սեփականության վկայական N2809643, տրված 2011թվականի ապրիլի 4-ին) Ջորավար Անդրանիկի փողոց թիվ 38/53 հասցեի 218,5քմ մակերեսով հողամասն օտարել Վարդան Վանիկի Ենոքյանին:

2. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 1-ին կետում նշված հողամասը.

1) հանդիսանում է բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամաս

2)հողամասի 1(մեկ) քառակուսի մետրի կադաստրային արժեքը 2940(երկու հազար ինը հարյուր քառասուն) դրամ է,

3)հողամասը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամաս:

3. Վարդան Ենոքյանը պարտավոր է վճարել.

1)քաղաքապետարանի 900105202171 հաշվեհամարին 682000 (վեց հարյուր ութսուներկու հազար) դրամ՝ հողամասի գինը

2)քաղաքապետարանի 900105202064 հաշվեհամարին 5000 (հինգ հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար

3) քաղաքապետարանի 900105202098 հաշվեհամարին 5000 (հինգ հազար) դրամ տեղական վճար՝ չափագրական աշխատանքներ կատարելու համար :

4. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների և տուրքերի վճարումը կատարվում է Վարդան Ենոքյանի կողմից:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2012թ. փետրվարի 20
ք. Բյուրեղավան

Իսկականի հետ ճիշտ է՝
Աշխատակազմի քարտուղար՝ Լ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ